

20. ՔՅԻՆԱՅ ՀՈՒՆՑ ՏԵՂ, ԳՅՈՒԴՈՒՄ ՉԸՄ ՀԻՇՏԵՂ

Մին ջահիլ տղու շատ զաշնանգյ նշանած ա ինում։ Թաքավորը էտ ըխճըկանը խլում ա տղեն ծեռքան, համ էլ օղում ա տրա կըլիխն օտե։ Տղեն ծեն ա տամ, պռնրում կոշտը, ասում.

Քյինա՜ ընդեղ,
Գյոնդում չըմ հիշտեղ,
Քյինա պեր ինձ
Գյոնդում չըմ հինչ։

Տղան ճարը կըտրած, հըզե յա ինում, քյինամ։ Շատ ա քյինամ։ Թա խրեգյ, մին վըեսկե սար ա կյամ առաչը։ Թխում ա, սարը ճղում, նի մըննում մաչը, տեսնում մաչան էն զոլն էլ ա վըեսկե։ Էտ վըսկեղանը լոխ պեռնում ա, պռնրում տամ Թաքավորեն։ Թաքավորն ասում ա.—Չե՛, տա իմ ասածը չի։

Տըղան նորըմինան ա հըզե ինում, քյինամ մին օրիշ հեռու երգյիր։ Էտ գեռնում մին ըլմատան սարու վա տեմ ինգում։ Սարը ճղում ա, էտ ըլմըստեղանն էլ սաղ պեռնում, պռնրում տամ Թաքավորեն։ Թաքավորը նորից Թա՝ չէ՛, տա իմ ասածը չի, քյինա՜ իմ ասածը պեր։

Վերջը, էտ տղան շատ տեղեր ա քյինամ, շատ Թինգյանկան պեներ ա Թաքավորեն հետե պռնրում, Թաքավորը միշտ էլ Թա՝ չէ՛, էտ իմ ասածը չի, քյինա՜ իմ ասածը պեր։

Տղան նորից ա հրդեհ ինում, քյինում։ Շատ ա քյինում, թա խրեգյ, հրսնում ա մին հուղնբռողնը տեռնող հրդեցու։ Ամեն էլ նրդացած-վրնեն իլած նի յա մրենում ըռեղ։ Մարթ-մուրթ չի ուրվում, մինակ մին պրռավու սաս ա ըսկանում։ Էտ սասը էտ տղեն հրդեցնում ա, թա հո՞ւ վրս, հինչ ը՞ս, ըստեղեքյ հինչ ը՞ս անում։ Տղան թա՝ մրեր թաքավրերը ինձ իստի տեղ ա դարկալ, ասալ ա.

Քյինա՜ հունց տեղ,
Դյոնդոնմ չըմ հիշտեղ,
Քյինա՜ պեր ինձ
Դյոնդոնմ չըմ հինչ։

Էտ պրռավեն սասը թա՝ հալա՜ նրդացած, սոված կինիս, նրստե դինչնց, հաց կեր, նոնան տեսնանք հինչ ընք անում։ Պառավը սաս ա անում.—Դոնդո՜ն, դոնդո՜ն, ենլի նք ըստեղ։ Դոնդոն էլ հինչ վրեր մին զուշ ա, վրեր ուրվամ չի։ Մրխրրն կենում ա, թա՝ դոնդո՜ն, էս սրՀաթրս մին մրեն ըստոլ սարքե, ոնրան ամեն պադրասատությունավը։ Տղան նշում ա, տեսնում ըստոլը ըռաչին, ամեն հինչը յրան լիգյը։ Օտում ա, խրմում, պրբանվում քոն ինում քուշտանում, նր կենում։

Տղան նորից պրռավեն սասն ա ըսկանում։ Պառավն ասում ա.—Թա՜լա, տու դյոնդոնմ չըս պենը հինչումն ա։ Թաքավրերն օգում ա կլոխրտ օտն։ Տղան թա՝ պա հինչ ա՞նեմ։ Պառավը թա՝ վրեր հրդեհ ինիս քյինաս, դոնդոն քրդնրհետ ըմ տիննանկան, հիշտեղ վրեր նեղ տեղ ինգյիս, հինչ վրեր օգնս, հրսրրեննական ա։

Էտ տղան հրդեհ յա ինում, քյինում։ Դոնդոն տռանց ուրվալի, տղեն նհետ դրբրնբասամ քյինում ա։ Շատ ա քյինում, թա խրեգյ, ինգյնում ա մին մթեն ախշարը։ Մին տոն ա քրթենում, նրստած ա ինում մին պառավ մարթ։ Էտ մարթն էլ էն պրռավեն նրհետ կապված ա ինում, ամեն հինչ արտեն գյիդանլիս ա ինում։ Մին թոնթագյ էլ տա յա տամ, ասում.—Վրեր նեղ տեղ ինգյիս, մարթ ինի հարկավրեր, թոնթագյը վրեր յիրան աննս, ըսկրսն դրլրդրլն ընելավ քյինալը, հիշքան մարթ օգնս, կյիլանկան ըն կոշտրտ։

Էտ տղան զուշն ան թոնթագյը նր կալած քյինում ա։ Շատ ա քյինում, թա խրեգյ, մին ժամկու մաչ ա ինգյնում, ժամկեն տեմն էլ մին մրեն ծով ա ինում, էն մին տեմն էլ մին մրեն քրեր, ժրմակումն էլ մին հրլիվուր մարթ ա ինում նստած։ Էտ մարթն էլ ա նրհանցա ինում (էն մին մրեն մարթին ան պրռավեն ըն-

6—432

գյունան)։ Տա յել ա գյունդում ողեն կըլոխը նկածը նան կյիլաքանը։ Մին կացեն էլ տա յա տամ էտ ողեն, համ էլ ասում.— Քա վըեր նեղ տեղ ինգյնիս, քընդիլի, յա շինիլի, կուտրելի յա փշրելի պեն ինի, կացնեն վըեր ասես, ինքյը ամեն հինչ ընեական ա։

Տղան զուշը, Թուքաքգյը նան կացենը եր կալած քյինամ ա տունա կյամ ուրան Թաքավըերեն վըեղը, հենց էտ Թաքավըերեն քըզաքան խիլա մոտե տեղ օգում ա Թաքավըերեն պըլատան մին շատ մըեծ պալատ շինի։ Զուշին ծեն ա տամ, Թա՝ քըզանա օգում ըմ սաղ մատերիալը, Թուքաքգյը յիրա յա անում, դըլըդըլե ընեալ վըեր քյինամ ա, ասում ա.—Քըզանա յել օգում ըմ պըլատեն յիրա պեն անող էնքան մարթ, վըերքան վըեր հարկավըեր ա։ Կացնեն էլ ասում ա.—Քըզանա յել օգում ըմ կտրելի, կուտրելի, քընդիլի-շինիլի, պալատը վրեննը կըցընելի սաղ պենը։

Զուշը, Թուքաքգյը, կացենը ամեքյա ուրանց պենը տեսնում ըն, մին քանի օրումը պալատը շինում, վրեննը կըցընում։

Խաբարը հըսնում ա Թաքավըերեն, Թա վըեղումըտ խատի մին մարթ ա տունա եկալ, քըզաքատ մոտե խատի մին պալատ ա շինալ, վըեր քու պըլատետ յիրա շոք կանե։

Թաքավըերը ուրան զորքը յոր ա օնում, քյինամ պըլատեն կոխկեն վըեր կյամ, եր ինում մին պեցուր տեղ, էտ ողեն ծեն տամ։ Տղան տունա ա կյամ աշկար։ Թաքավըերը տրան ճինանչում ա, հըրցընում.—Պենը հինչո՞ւմն ա, վըեր տու կըրեցալ ըս իմ պըլատան մին քանի կըլոխ լավ պալատ շինիս, ես կարում չըմ։ էտ տղան Թա՝ իմ օժը ժողովուրթումն ա, ես լոխանինին նըհետ էլ կապ օնում, լոխ ինձ քյոմագյ ըն անում, տու հի՞նչացու վրա։ Թաքավըերը Թա՝ վըեր տի յա, եք կըռև աննենք։ Տղան Թա՝ լավ։ Թաքավըերը ուրան զորքն ա տունա օնում, տղան էլ Թուքաքգյը դըլըդըլե անել ա տամ, Թաքավըերեն զորքան մին ուրու հետ շատ զորք տունա օնում։ Դունդուն էլ տահանց ամեն հինչն ա հըսցընում, կացենն էլ ըսկսում ա կուտրատել, փըշրրոտել։ Վերջը, Թաքավըերեն զորքեն խռեգյ ա տամ, Թաքավըերեն էլ ըսպանում։ էտ տղան տեռնում ա Թաքավըեր։